



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 34Լ

**2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԳԵՄԻԱՅՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏԱԾ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ ԿԱՄ ԹԵՄԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը Արդարադատության ակադեմիայի ռեկտորին է ներկայացնում առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ՝ Արդարադատության ակադեմիայում դատավորների, Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և դատական ծառայողների հաջորդ տարվա ուսուցման ծրագրերում ներառելու համար՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2018 թվականին Արդարադատության ակադեմիայում դատավորների, Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսուցման ծրագրերում ներառելու համար Արդարադատության ակադեմիայի ռեկտորին ներկայացնել վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ՝ համաձայն հավելված 1-ի:

2. 2018 թվականին Արդարադատության ակադեմիայում դատական ծառայողների ուսուցման ծրագրերում ներառելու համար Արդարադատության ակադեմիայի ռեկտորին ներկայացնել վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ՝ համաձայն հավելված 2-ի:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահի  
պաշտոնակատար**

**Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ**

2017թ. հուլիսի 31  
ք.Երևան

**Հավելված 1**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի**  
**2017թ. հուլիսի 31-ի թիվ 34Լ որոշման**

**2018 թվականին Արդարադատության ակադեմիայում դատավորների, Արդարադատության ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ**

1. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հիմնահարցերը,
2. ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի միտումները,
3. Իրավական մեկնաբանման հարցեր,
4. Իրավական օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի կիրառման հիմնախնդիրները,
5. Փաստարկում և հռետորաբանություն,
6. Կառավարման հմտություններ և ներագրման հոգեբանություն,
7. ՀՀ դատական օրենսգրքի նախագծում ամրագրված կարգավորումների մեկնաբանության հարցեր,
8. Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցերը,
9. Անչափահասների իրավունքների պաշտպանությունը քրեական վարույթի ընթացքում,
10. ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քաղաքացիական գործերով,
11. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հիմնահարցերը,
12. Ոչ նյութական վնասի հատուցման հիմնախնդիրները,
13. Սնանկության վարույթի արդի հարցերը,
14. ՀՀ վճարեկ դատարանի նախադեպային որոշումները քաղաքացիական գործերով,
15. ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հիմնահարցերը,
16. Պարտավորական հարաբերությունների արդի հիմնահարցերը,
17. Ջրպարտության և վիրավորանքի գործերով վարույթի առանձնահատկությունները,
18. Քաղաքացուն հոգեբուժական հիվանդանոցային հարկադիր բուժման ենթարկելու վերաբերյալ գործերով վարույթի առանձնահատկությունները,
19. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործերով վարույթի առանձնահատկությունները,
20. Բանկերի կողմից գումարի և տույժերի հաշվարկման ու բռնագանձման պահանջի գործերով վարույթի առանձնահատկությունները,
21. Երեխայի որդեգրման գործերով վարույթի առանձնահատկությունները,

22. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը,
23. ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը,
24. ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների և գործողությունների վիճարկումը,
25. Հարկադիր կատարողի դիմումով կողմերի հաշտության համաձայնության հիման վրա դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերանայման վարույթի առանձնահատկությունները,
26. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը,
27. Ընտրական վեճերի արդի հարցերը,
28. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները վարչական գործերով,
29. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրության հիմնահարցեր,
30. ՀՀ էկոլոգիական իրավունքի արդի հարցերը,
31. ՄԻԵԳ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով,
32. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը,
33. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծում ամրագրված կարգավորումների մեկնաբանության հարցեր,
34. Պատժի նշանակման կանոնների քրեաիրավական և քրեադատավարական խնդիրները,
35. «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում ամրագրված կարգավորումների մեկնաբանության արդի հարցեր,
36. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը,
37. ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը,
38. ՀՀ քրեական օրենսգրքի նախագծում ամրագրված կարգավորումների մեկնաբանության հարցեր,
39. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները քրեական գործերով,
40. Խոցելի անձանց մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները:

**Հավելված 2**  
**Հայաստանի Հանրապետության**  
**դատարանների նախագահների խորհրդի**  
**2017թ. հունիսի 31-ի թիվ 34Լ որոշման**

**2018 թվականին Արդարադատության ակադեմիայում դատական ծառայողների վերապատրաստման առարկայական կուրսերի կամ թեմաների վերաբերյալ առաջարկություններ**

**Ընդհանուր մասնագիտական դասընթաց**

1. Գատական ծառայության հիմնահարցերը,
2. ՀՀ դատարանների նախագահների խորհրդի որոշումների կիրառման առանձնահատկությունները,
3. Ժամանակի կառավարում:

**Հատուկ մասնագիտական դասընթաց**

1. Կառավարման հմտություններ,
2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մեկնաբանման տակտիկա,
3. ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը,
4. Հաշվապահական հաշվառման («ՀԾ» հաշվապահական ծրագիր, հարկային հաշվառման առանձնահատկություններ) և գումարների իրականացման հիմնահարցերը,
5. Բյուջետային գործընթաց, ֆինանսական միջոցների պլանավորման հմտություններ,
6. Արխիվային գործի հիմնահարցերը,
7. ՀՀ դատարանների գործավարության կանոնները («Ֆեմիդա» համակարգչային ծրագիր),
8. «Գատական համակարգ» ծրագրի հմտությունների կատարելագործում,
9. Համակարգչային հմտությունների կատարելագործում,
10. ՀՀ դատական վիճակագրություն, վիճակագրական տվյալների ստացման հմտությունների կատարելագործում:

**Քաղաքացիական մասնագիտացում**

1. Քաղաքացիական գործերով ՄԻԵԴ- նախադեպային իրավունքի կիրառման արդի հարցերը,
2. ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը,
3. Գրավի ինստիտուտի կիրառման հիմնահարցերը,
4. Սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների պաշտպանության հիմնահարցերը,
5. Գույքի առանձին տեսակների ժառանգության առանձնահատկությունները,
6. Քաղաքացու կյանքին կամ առողջությանը պատճառած վնասը հատուցելու (կերակրողի մահվան հետևանքով վնաս կրած անձանց վնասը հատուցելու) ինստիտուտի առանձնահատկությունները,

7. Անհիմն հարստացման հետևանքով ծագած պարտավորությունների կատարման արդի հիմնահարցերը,
8. Աշխատանքային պայմանագրերի տեսակների, լուծման, լուծման կարգի առանձնահատկությունները,
9. Հայցային վաղեմության ինստիտուտի կիրառման առանձնահատկությունները աշխատանքային իրավահարաբերություններում,
10. Ոչ նյութական վնասի հատուցման արդի հիմնահարցերը,
11. Պետական տուրքի և դատական ծախսերի հաշվարկման ու գանձման առանձնահատկությունները,
12. Դատական հանձնարարությունների կատարման արդի հիմնախնդիրները,
13. Հաշտարարության ինստիտուտի հիմնախնդիրները,
14. Ապահովագրական իրավահարաբերությունների, սուբրոգացիայի իրավունքի արդի հիմնախնդիրները,
15. Պարտապանի անունից սնանկության կառավարչի կողմից հայց հարուցելու ինստիտուտի առանձնահատկությունները,
16. Քաղաքացիական դատավարությունում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը,
17. ՀՀ ընտանեկան և ՀՀ աշխատանքային օրենսգրքերով նախատեսված իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման հիմնախնդիրները:

#### **Վարչական մասնագիտացում**

1. Վարչական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրառման արդի հարցերը,
2. ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը,
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթի արդի հարցերը,
4. Ընտրական վեճերի արդի հարցերը,
5. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի արդի հարցերը:

#### **Քրեական մասնագիտացում**

1. Քրեական գործերով ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրառման արդի հարցերը,
2. ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը,
3. Քրեական գործերով ՀՀ վճարելի դատարանի որոշումների կիրառման արդի հարցերը,
4. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը,
5. Քրեական գործերով իրավական օգնության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի կիրառման առանձնահատկությունները: